ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

30. հունվարի 2019 թվականի N 28-Ն

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 40-րդ, 41-րդ հոդվածներով, 42-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ԲՓ 114 «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» պետական փորձաքննական դրական եզրակացությունը, «ՄԵՐՁՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲ ընկերության 2018 թվականի նոյեմբերի 06-ի թիվ 11/18 դիմումը, «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2018 թվականի նոյեմբերի 14-ի թիվ Ֆ-329/18 գրությունը, Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.«ՄԵՐՁՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) 2 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ-29/279 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբացի անդեզիտաբազալտների հանքավայրի երևակումում (այսուհետ՝ Երևակում) հետևյալ կոորդինատներով՝ 1-ին տեղամաս՝ 1.X=4509958 Y=8405572, 2.X=4510040 Y=8405630, 3.X=4510008 Y=8405830, 4.X=4509890 Y=8405758, 2-րդ տեղամաս՝ 1.X=4508800 Y=8405543, 2.X=4508831 Y=8405738, 3.X=4508756 Y=8405940, 4.X=4508555 Y=8405940, 5.X=4508600 Y=8405755, 6.X=4508600 Y=8405560 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) սահմանափակված, 11.0 հա տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու համար:

2.Կնքել Երևակման օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

3.Ընդերքի գործակալության պետին՝

1)ծանուցել Ընկերությանը՝ 5 օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը,

2)հրավիրել Ընկերությանը՝ 10-օրյա ժամկետում Պայմանագիրն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար,

3)Ընկերության կողմից Պայմանագիրը վավերացնելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10-օրյա ժամկետում վերջինիս տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը (օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն, Պայմանագիր, լիազոր մարմնի հետ համաձայնեցված աշխատանքային ծրագիր),

4)ծանուցել Ընկերությանը, որ սահմանված ժամկետներում Պայմանագիրը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

5)սահմանված կարգով իրականացնել երկրաբանական ուսումնասիրության իրավունքի հաշվառումը՝ երկրաբանական ուսումնասիրությունների իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4.«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում կատարել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումները:

5.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

1/30/2019

X

VERIFIED OCSP 30-Jan-19 17:52:40 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118